

---

**ՀՈԳՈՒ ԵՎ ԿՅԱՆՔԻ ՄԿԻԶԲ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ  
ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐՈՒՄ**

**ԼԱԶԻՆՅԱՆ Ա. Ս.**

Հայոց ավանդական հասարակարգում հոգու և «կյանքի սկզբի» չափանիշների մասին ձևավորվել են այլնայլ տեսակետներ: Որոշ տեղեկություններ, ինչպես նաև հետազոտությունների ընթացքում հավաքված նյութերը երբեմն հակասական են ու տարբեր, բայց և այնպես՝ բացատրելի: Տվյալ աշխատանքում մեզ համար առանցքային աղբյուր են եղել XIX դարավերջին և XX դարասկզբին ազգագրագետների կատարած գրառումները. դրանք համեմատելով վերջին երկու տարվա ընթացքում մեր գրառած ազգագրական նյութերի հետ՝ ակնհայտ է դառնում, որ սվյալ ոլորտում ավանդական պատկերացումները բավական պահպանողական ու գործածելի են մինչ օրս: Ի դեպ, հարկ է նշել, որ այս թեմայով հավատալիքները շատ ավելի հին են, քան քրիստոնեական եկեղեցու գաղափարախոսության տարածման ժամանակները, և այս երկուսը դարերի ընթացքում միախառնվել են իրար:

Հայտնի է, որ ժողովրդական պատկերացումներում մարդու հոգին «առնողն ու սվողը» եղել է Գաբրիել հրեշտակապետը: Մարդիկ հավատում էին, որ երեխան մոր արգանդում շնչավոր է, պարզապես հոգի չունի. «Հոգի էր առնում ծնված բույեին հրեշտակապետից, որը նաև գրում էր սվյալ մարդու ճակատագիրը»<sup>1</sup>: Նրանք համոզված էին, որ ճակատագիրը գրվում է ծնվելու պահին. «Ժողովրդի կարծիքով, երեխան աշխարհ գալիս (հոգեցեն հոգի բաժանելիս) ծննդկանն Աստուծուց ինձ խնդրե, կկատարվի»<sup>2</sup>: Գաբրիել հրեշտակը նախասահմանված օրը իջնում, կանգնում էր հանգուցյալի ոտքերի կողմը և, եթե անձը բարի, առաքինի է եղել, «բարի դեմքով» էր երևում, իսկ եթե մեղսավոր՝ «չար դեմքով» և տանջելով՝ առնում էր հոգին<sup>3</sup>: Այդ իսկ պատճառով, որոշ մարդիկ կարծում էին, որ հղիության արհեստական ընդհատումը մեղք չի կարող լինել՝ արդարանալով, որ. «Փորում էրեխեն պողիկ է լինում, ի նչ հոգի, ի նչ մեղք: Հլը ըղորը ոչ մի բան էլ չկա՝ մի գունդ միս է: Բայց, որ ունենում են, նոր սպանում շատ մեծ մեղք է»:

---

<sup>1</sup> Լալայեան Ե., Նոր-Բայազետի գավառ [«Ազգագրական հանդես» (այսուհետև՝ ԱՀ), գիրք 16, Թիֆլիս, 1907, էջ 34]:

<sup>2</sup> Լալայեան Ե., Երկեր հինգ հատորով, հ 1, Ջավախք, Ե., 1983, էջ 167:

<sup>3</sup> Լալայեան Ե., Բորչալուի գավառ (ԱՀ, գիրք 10, Թիֆլիս, 1903, էջ 167): Նույնի՝ Մուշ-Տարոն (ԱՀ, գիրք 26, Թիֆլիս, 1916, էջ 188): Բենսե, Բուլանըլիս կամ Հարք գավառ (ԱՀ, գիրք Ե, Թիֆլիս, 1899, էջ 182):

Բայց շատերն էլ կարծել են, որ երեխայի մեջ հոգի է ձևավորվում այն ժամանակ, երբ նա սկսում է սնվել պորտալարով<sup>4</sup>, և պատահական չէ այն պատկերացումը, թե՛ «Երբ մեկի անգթությունը ուզենան ցոյց տալ, կասեն՝ հոգու նմուշ չկայ փորու մեջ»<sup>5</sup> կամ՝ երբ ցանկանում են արտահայտել իրենց վախեցած լինելու աստիճանը, ասում են. «Հոկիս փՓրիծս փախեր էր»<sup>6</sup>, որտեղ հոգու գտնվելու վայրը փորի հասվածում է արտացոլվում: Այդ է արտահայտում նաև այն ասացվածքը, երբ ցանկանալով չար մարդկանց նախատել, ասում են. «Քրզի հոգի յու ստ է, շունչք է մրջ քու փորուն»<sup>7</sup>:

Հնում հայ ժողովուրդը պորտին և «պրրտկրտրի»-ի<sup>8</sup> արարողությանը մեծ նշանակություն է տվել, հավանաբար հավատալով, որ այն անմիջական կապ ունի հոգու հետ. Երբ տատները ծնունդից հետո կտրում էր երեխայի պորտը, արու զավակի դեպքում այն գցում էր գոմը, որպեսզի երեխան անասնապահ լինի, իսկ եթե աղջիկ էր ծնվում, տան մի անկյունում էին պահում, որպեսզի ամոթխած և տնտես դառնա<sup>9</sup>: Ենթադրվում էր, որ հոգու մասնիկը ինչ-որ տեղ թողնելով՝ մարդն ապագայում անպատճառ կվերադառնա այնտեղ: Ընդհանրապես, հավատում էին, որ այն վայրը, որտեղ թաղում էին երեխայի պորտի մասը, ապագայում ոչ միայն ազդեցություն կունենար տիրոջ կյանքում<sup>10</sup>, այլև որոշելու էր հասարակության մեջ անհատի զբաղեցրած դիրքը: Եթե դա լիներ եկեղեցի կամ դպրոց, ապա մարդը կլիներ կարդացող, շուկա՝ առևտրական, դարբնոց՝ արհեստավոր, փողոց՝ թափառական, տան մի անկյուն՝ ամաչկոտ, տան պատի մեջ՝ տանը նվիրված և այլն<sup>11</sup>: Դրա համար էլ, երբ որևէ մարդու գործերը ձախողվում էին, ասում էր. «Վա՛յ, պորտ կտրող, էս վՓնձ կդրիր, յու ը շբրդիր»<sup>12</sup> կամ՝ «Իմալ էլնիմ, իմ պորտն է հրմալ կտրուկ»<sup>13</sup>: Եթե պորտ կտրողը

<sup>4</sup> Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԴԱՆ), 2013, Կոտայքի մարզ, գ. Մեղրաձոր, տետր N 2, էջ 69 (բանասաց՝ Գալիբե Հայրապետյան, ծնվ. 1932, արմտ. Արծափ): ԴԱՆ, 2014, Կոտայքի մարզ, գ. Սոլակ, տետր N 4, էջ 26 (բանասաց՝ Լիդա Մարգարյան, ծնվ. 1938, արմտ. Ռշտունիք):

<sup>5</sup> Բենսե, նշվ. աշխ., էջ 182:

<sup>6</sup> ԴԱՆ, 2013, Կոտայքի մարզ, գ. Մեղրաձոր, տետր N 2, էջ 94 (բանասաց՝ Մարգարիտ Հակոբյան, ծնվ. 1948, արմտ. Արծափ):

<sup>7</sup> Բենսե, նշվ. աշխ., էջ 182:

<sup>8</sup> Պրրտկրտրի պահանջել, նշանակում է՝ որոշ գումարի դիմաց պորտը կտրել (Տե՛ս Լալայեան Ե., Գողթն (ԱՀ, գիրք 12, Թիֆլիս, 1904, էջ 137): Դա սովորաբար կատարում էր տատմայրը՝ մկրատով կամ դանակով: Փորից չորս մատ երկարությամբ կտրում էին պորտը. փորը մետաքսե կամ բամբակե թելով կապում էին, իսկ պորտը ինքն իրեն մաշվելով՝ մի քանի օր հետո պոկվում, ընկնում էր: Կտրելուց, շորի մի կտոր այրելով դնում էին պորտի արմատին, որպեսզի վերքը առողջանա (Բենսե, նշվ. աշխ., էջ 123):

<sup>9</sup> Լալայեան Ե., Սիսիան (ԱՀ, գիրք 9, Թիֆլիս, 1898, էջ 229): Նույնի՝ Վարանդա (ԱՀ, գիրք Բ, Թիֆլիս, 1897, էջ 146): Լիսիցյան Սու., Չանգեզուրի Հայերը, Ե., 1969, էջ 203:

<sup>10</sup> Тер-Саркисянц А. Армяне. История и этнокультурные традиции, М., 1998, с. 189.

<sup>11</sup> Բենսե, նշվ. աշխ., էջ 124: Լալայեան Ե., Գանձակի գավառ (ԱՀ, գիրք 2, Թիֆլիս, 1900, էջ 277):

<sup>12</sup> ԴԱՆ, 2013, Կոտայքի մարզ, գ. Մեղրաձոր, տետր N 2, էջ 94 (բանասաց՝ Մարգարիտ Հակոբյան):

<sup>13</sup> Բենսե, նշվ. աշխ., էջ 124:

(հիմնականում՝ տատմերը) բարի մարդ էր, երեխան ևս բարի և ազնիվ կլիներ, և ընդհակառակը: Ուստի, երբ երեխան չար էր լինում, «պորտ կտրողին յիշոց կուտան»<sup>14</sup>: Ասում էին՝ եթե պորտ կտրելու ժամանակ «լաց ու կոծ պատահի, երեխան անբախտ կը լինի»<sup>15</sup>: Երբ նորածինը ծնվում էր կիսախեղդ, շնչասպառ կամ անձայն, նորածնի ուշագնաց լինելը վերագրում էին հոգին ընկերքի մեջ անցնելուն, ուստի բացում էին մոտեցնելով կրակին՝ շփելով և մերսելով պորտը, որ տաքությունը գնար դեպի մարմինը և հոգին վերադառնար նորածնի մարմնի մեջ, այն է՝ «հոգևորնայ»<sup>16</sup>: Ուշագրավ է, որ հայոց մեջ կար արմատացած մի սովորույթ՝ կապված ընկերքի<sup>17</sup> հետ (որը նույն պորտի և պորտալարի շարունակությունն է). երբ ծննդաբերությունից հետո այն ընկնում էր, «Դայակը (տատմերը - Լ. Ա.) վերցնում էր ընկերքը և տանում թաղում էր չոր հողի մեջ և տերունական աղոթք ասելով՝ ծեծում, որ «չսաղնա», ապա թե ոչ՝ «կսաղնա» և ծննդկանի սիրտը կրթրթռի, կըմարեմրի, և անհրաժեշտ կլինի նորից գալ «Հայր մեր» ասելով ծեծել մեռցնել ընկերքը, որ ծննդկանը առողջանա»<sup>18</sup>:

Ժողովրդի մեջ բավական մեծ տարածում գտած մեկ այլ տեսակետ գոյություն ուներ, որի համաձայն, հոգին առաջանում էր այն ժամանակ, երբ երեխան սկսում էր շարժվել կամ, ինչպես տարածված էր ժողովրդական խոսքում, «խաղալ»: Եվ միայն խաղից հետո էին հղիություն ընդհատելը մեղք համարում<sup>19</sup>: Երբեմն ասում են, որ 4 ամսական երեխայի մեջ նոր-նոր առաջանում է հոգի, բայց այդ դեպքերում նույնպես ի նկատի ունեն շարժվելու պահը, քանզի հայտնի է, որ երեխան մոր որովայնում սկսում է շարժվել մոտավորապես 4-րդ ամսից<sup>20</sup>, թեպետև այն ունի անհատական բնույթ, և տարբեր մարդկանց մոտ այդ «առաջին շարժը» կարող է լինել տարբեր ժամանակահատվածներում:

Հնում արմատացած էր այն հավատալիքը, որ երեխան ինչ անձնավորության առջև առաջին անգամ «խաղա», նրա բնավորությունը կունենա<sup>21</sup> կամ տեսքը. «Ուստի և մայրերն զգուշանում էին, որ առաջին խաղի ժամանակ գեղեցիկ

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 124:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 124:

<sup>16</sup> Լալայեան Ե., Ջավախք (ԱՀ, գիրք Ա, Շուշի, 1895, էջ 266): Նույնի՝ Միսիան, էջ 228: Նահապետյան Ռ., Աղձնիքահայերի մանկան ծննդի և խնամքի ավանդական սովորույթներն ու ծեսերը, Ե., 2011, էջ 81:

<sup>17</sup> «Ընկերք - պարկաձև հիստուածք, որ գոյանում է յրացած կնոջ արգանդում և միացնում է սաղմը արգանդի հետ, և որի մեջ աճում ու զարգանում է սաղմը: Ընկերքը դուրս է գալիս երեխայի ծնունդից հետո միաժամանակ կամ քիչ անց: Եթե ընկերքը, ծնունդից յետո, երկար ժամանակ մնայ արգանդում՝ սրանից կարող են վտանգավոր հիւանդություններ առաջ գալ» (Մալխասեանց Ստ., Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ՀԲԲ), Ե., 1944, էջ 698):

<sup>18</sup> Լալայեան Ե., Երկեր հինգ հատորով, հ. 1, էջ 169:

<sup>19</sup> ԴԱՆ 2013, Գոտայքի մարզ, գ. Մեղրաձոր, տետր N 2, էջ 69 (բանասաց՝ Գալիբե Հայրապետյան), նույն տեղում, էջ 41 (բանասաց՝ Շիշան Վիրաբյան, ծնվ. 1931, արմտ. Արծալի):

<sup>20</sup> ԴԱՆ 2013, Շիրակի մարզ, գ. Փանիկ, տետր N 1, էջ 107 (բանասաց՝ Ռոզա Բարսեղյան, ծնվ. 1927, արմտ. Ալաշկերտ):

<sup>21</sup> Լալայեան Ե., Ջավախք, էջ 265: Նույնի՝ Գողթն, էջ 136:

մարդու կամ նախշ ու նկարի առջև կանգնած լինեին, որպեսզի երեխան գեղեցիկ ծնվեր»<sup>22</sup>: Սովորաբար խոսակցության մեջ մեկի տխմարությունը ծաղրելու համար, ասում էին. «Իշու դէմն է խաղցի»<sup>23</sup>, կամ, եթե տգեղ երեխա էր՝ «Այս ի՞նչ տգեղ մարդու դէմն է խաղցի»<sup>24</sup>: Այս հավատալիքները, ենթադրում ենք՝ վկայում են այն մասին, որ ամեն դեպքում երեխային ուղղակի «մսի կտոր» չեն համարել, այլ՝ հոգևոր էակ, այդ պատճառով էլ երբեք չեն մերժել կնոջ ցանկությունները ուտեստի հարցում:

Ներկայացնենք պտղի զարգացման և շնչավորման մասին ժողովրդական պատկերացումների մի տիպիկ օրինակ.

Դեռ չեղած՝ կարծես հոտ էի,  
 Հորս երակներում դեռ մրուր<sup>25</sup> էի,  
 Ըստ մանկության՝ ես մի կաթիլ չունեի.  
 Մայրս ինձ արգանդում ընդունեց զավակ:  
 Մեկ ամսում ջուր էի,  
 Երկրորդ ամսում տաքացա և սառա,  
 Երրորդ ամսում հոգի եկավ, շունչ առա,  
 Չորրորդ ամսում ըսկսեցի ես աճել մարդու նման:  
 Հինգերորդ ամսում տեղս նեղ էր, բարձրացա  
 Վեցերորդ ամսում ըսկսեցի ման գալ՝ թե ծուռ, թե շիտակ,  
 Յոթերորդ ամսում բեռան նման մորս վրա ծանրացա,  
 Ութն էլ եկավ, ասին՝ մեկ ամիս մնաց ժամանակ,  
 Երբ լրացավ 9 ամիս, 9 ժամ՝ խղճուկ մորս բռնեց ցավը  
 անխնա<sup>26</sup>:

Մարդկային էակի զարգացման հետ կապված պատկերացումները մեկ այլ օրինակում ներկայացված են եռատողի միջոցով, որտեղ կրկին երևում է, որ շունչ կամ հոգի հասկացողությունը առաջանում է ոչ թե բեղմնավորման պահից, այլ պտղի զարգացման ընթացքում, երբ մարմինն արդեն ձևավորված է.

Կաթ էիր՝ դալամայ<sup>27</sup> դառար,  
 Մարմին հազար, ոսկոռացար,

<sup>22</sup> Կարապետյան Ե., Մասուն. Ազգագրական նյութեր, Ե., 1962, էջ 93:

<sup>23</sup> Բենսե, նշվ. աշխ., էջ 122: Լալայեան Ե., Մուշ-Տարոն, էջ 176:

<sup>24</sup> Լալայեան Ե., Մուշ-Տարոն, էջ 176:

<sup>25</sup> «Մարդու կազմուածքի մէջ առաջացող պինդ գոյացություն» (ՀԲԲ, էջ 1524):

<sup>26</sup> ԴԱՆ, 2014, Կոտայքի մարզ, գ. Քաղսի, տետր N 4, էջ 33 (բանասաց՝ Ռոզա Խաչատրյան, ծնվ. 1937, արմտ. Մակու): Բանասացը տողերի իրական հեղինակի անունը չցանկացավ նշել:

<sup>27</sup> «Պանիր շինելու համար մակարդած կաթ» (ՀԲԲ, էջ 505): Այստեղ՝ փոխաբերական իմաստով:

Շունչ առար, աշխարհ եկար<sup>28</sup>:

Ըստ ժողովրդական պատկերացումների՝ մարդը կենդանուց տարբերվում էր նրանով, որ հոգի ունի, իսկ վերջինը՝ միայն շունչ<sup>29</sup>: Համշենցի հայերը գտնում էին, որ կենդանին էլ մարդու պես հոգի ունի. «Մալը հոգի չունենար, ինչպե՞ս պետք է ապրէր»<sup>30</sup>: Նրանք առհասարակ կենդանի արարածներին անշունչ ու անշարժներից տարբերելու համար գործածում էին ուղղակի «Հոգրեօր մալ» արտահայտությունը, որ հավասարապես վերաբերում էր թե՛ մարդուն, և թե՛ կենդանիներին: Հոգի ասելով՝ նրանք հասկանում էին այն շարժումը, եռանդն ու կենդանությունը, որ հատուկ է բոլոր կենդանի էակներին, բայց այդ կենդանությունն ընդունում էին ոչ թե իբրև ամբողջ օրգանիզմի, կյանքի գործունեության հետևանք, այլ հակառակը՝ այդ կյանքն ու արարածների գոյությունը՝ օրգանիզմի մեջ ապրող ու պահված, անտեսանելի հոգու արդյունք: Նրանք կարծում էին, որ երբ հոգին գնում է, կյանքն էլ է ոչնչանում, և գոյությունը դադարում է: Կենդանիներիսատկելուց հետո նրանց հոգին գնում, կորչում է անասունի հետ, մինչդեռ մարդու մեռնելուց հետո հոգին կենդանի է մնում և մարմնից բաժանված ապրում է իր համար նշանակված տեղում՝ սպասելով վերջին դատաստանին<sup>31</sup>:

Մարդիկ հոգին և մարմինը դիտարկում էին որպես ինքնուրույն համակարգեր, որոնք զարգանում էին միմյանցից անկախ. «Թե՛ այր և թե՛ կին մարդկանց, թե՛ ծերունու և թե՛ երեխայի հոգին միատեսակ և միաչափ է. և հենց այդ է պատճառը, որ երեխայի մարմինը փոքր լինելով՝ հոգին նեղությիւն է տալիս, և երեխան յաճախ լաց է լինում»<sup>32</sup>: Նրանք կարծում էին, որ «Հոգին ու մարմին դուշման (թշնամի - Լ. Ա.) են իրարու, են վախտ որ մարմին չար էրած կենե, հոգին կը մալուլի (տխրել - Լ. Ա.) ու խռովի»<sup>33</sup>: Այդուհանդերձ, պարզաբանում էին՝ մարմինը ենթարկվում է հոգուն, որովհետև հոգին կարող է մարդու կենդանության ժամանակ թողնել մարմինը և գնալ: Այդ թափառելու ընթացքում մարմինը բոլորովին անզգա ընկած է մնում, մինչև հոգին նորից վերադառնում է<sup>34</sup>: Մտածում էին, որ մարմինն իր չարագործության ու մեղքերի համար պատասխանատու է հոգուն. «Զէդ անաստուածութիւն որ կենիս զբու հոգու ջուհապն ի՞ մալ կիտասս էնդիու

<sup>28</sup> ԴԱՆ, 2014, Կոտայքի մարզ, գ. Սոլակ, տետր N 4, էջ 26 (բանասաց՝ Լիդա Մարգարյան, ծնվ. 1938, արմտ. Ռշտունիք):

<sup>29</sup> Լալայեան Ե., Վարանդա, էջ 185: Նույնի՝ Ջավախք, էջ 317: Բենսե, նշվ. աշխ., էջ 182:

<sup>30</sup> Սուրադեանց Թ., Համշենցի հայեր (ԱՀ, գիրք Ե, էջ 404-406):

<sup>31</sup> Նույն տեղում:

<sup>32</sup> Լալայեան Ե., Ջավախք, էջ 317:

<sup>33</sup> Բենսե, նշվ. աշխ., էջ 182:

<sup>34</sup> Լալայեան Ե., Վարանդա, էջ 185:

դունին (աշխարհք - Լ. Ա.)<sup>35</sup>: Հոգին շարունակում է այս աշխարհում ապրել մարդու մարմնից անկախ և սավառնում է դիակի շուրջն այնքան, մինչև մարմինը հողին հանձնեն<sup>36</sup>:

Գոյություն ունեին այլ հետաքրքիր պատկերացումներ ևս, որոնք բացատրում էին հոգու գտնվելու տեղը մարդու մարմնում: Բենսէն ևս գրում էր, որ հոգին մարդու գլխի մեջ է, և դա բացատրում էր «հոգետուն» բառով<sup>37</sup>. երևույթ, որ առ այսօր իշխում է ժողովրդական պատկերացումներում: Համարում էին, որ «Հոգուն հոգի ևս կայ, որովհետև երբ մեկը շատ նեղացնեն և չարչարեն, կասէ՛ չէ՛՛ զիմ հոգու հոգին հանեցիք»<sup>38</sup>: Իսկ չար մարդկանց համար ընդհանրապես ասում էին, որ նա հոգի չունի, այլ՝ անասունների նման միայն շունչ, որոնց համար ասում էին. «ի՛նչ անհոգի մարդ է»<sup>39</sup>:

Կարծում ենք՝ պատճառն այն է, որ շատերի համար հոգի և խիղճ հասկացությունները բացարձակապես նույնացվում էին, և այստեղից է առաջացել. «Կորի մարդու մալ (ունեցվածք, անասուն), կորի մարդու հոգի»<sup>40</sup> արտահայտությունը, քանի որ մարդը, ի բնե լինելով կասկածամիտ, ինչ-որ բան կորցնելու դեպքում սկսում է զրպարտել դիմացինին և դրանով էլ մեղք է գործում, կորցնում է խիղճը՝ զրկվելով նաև դրախտ գնալու իրավունքից, այսինքն՝ կորցնում է հոգին: «Հոգի կորցնել» բանաձևը առ այսօր գործածվում է ստել, զրպարտել իմաստով<sup>41</sup>:

Այսպիսով՝ մարդիկ հաճախ հոգի, շունչ և խիղճ հասկացությունները նույնացրել են և չեն սահմանազատել: Դա է պատճառը, որ հղիության արհեստական ընդհատումը նրանք մեղք չեն համարել և արդարացրել են այն դեպքերում, երբ հոգու առկայությունը նույնացվել է խղճի հետ, քանի որ տրամաբանական է՝ չծնված երեխան չի կարող ունենալ խղճի զգացում: Արդարացրել են նաև այն պարագայում, երբ հոգին նույնացրել են շնչի հետ, քանի որ երեխան սկսում է շնչել լույս աշխարհ գալու պահից: Իսկ երբ հոգին դիտարկել են որպես կյանքի ոչ նյութական սկիզբ, ապա հղիության արհեստական ընդհատումը հղիության 3-4 ամսից հետո, երբ պտուղը շարժվում է, չեն արդարացրել՝ դա մեղք համարելով: Սակայն վերը թվարկված բոլոր դեպքերն էլ հակասում են քրիստոնեական եկեղեցու գաղափարախոսությանը, որի համաձայն, «կյանքի սկիզբ» հաս-

<sup>35</sup> Բենսէ, նշվ. աշխ., էջ 182:

<sup>36</sup> Լալայեան Ե., Ջավախք, էջ 317:

<sup>37</sup> Բենսէ, նշվ. աշխ., էջ 182: ԴԱՆ 2013, Կոտայքի մարզ, գ. Մեղրաձոր, տետր N 2, էջ 26 (բանասաց՝ Գոհար Հակոբյան, ծնվ. 1981, այրմտ. Արծափ):

<sup>38</sup> Բենսէ, նշվ. աշխ., էջ 182:

<sup>39</sup> Նույն տեղում:

<sup>40</sup> ԴԱՆ, 2013, Կոտայքի մարզ, գ. Մեղրաձոր, տետր N 2, էջ 26 (բանասաց՝ Գոհար Հակոբյան):

<sup>41</sup> Նույն տեղում:

*կացությունը դիտարկվում է բեղմնավորման պահից<sup>42</sup>, երբ երկու առանձին բջիջներ, որոնք նախատեսված են իրար հետ համագործակցելու համար, միավորվում են, և առաջանում է մի նոր, առանձին համակարգ, նոր էություն, նոր կյանք:*

## ПОНЯТИЕ ДУШИ И ЗАРОЖДЕНИЯ ЖИЗНИ В НАРОДНЫХ ПОВЕРЬЯХ

ЛАЧИНЯН А. С.

Резюме

В народных поверьях понятия душа, дух и совесть часто отождествлялись. В силу сказанного искусственное прерывание беременности не считалось грехом и даже оправдывалось в тех случаях, когда душа и совесть идентифицировались, поскольку в стадии развития плод не наделен совестью. Искусственное прерывание беременности после 3-4 месяцев развития считалось грехом, ибо этот период совпадал с началом духовной жизни ребенка. Следует отметить, что рассмотренные нами поверья противоречат понятиям христианской религии, согласно которой «началом жизни» считается момент зачатия.

## THE CONCEPTION OF SOUL AND LIFE ORIGIN IN FOLK BELIEFS

A. LACHINYAN

Abstract

It is necessary to understand which stage of pregnancy is considered as a "threshold of life" for defining the abortions adepravity. Therefore, the issue is the perception of the fetus as a spiritual phenomenon. In the result of the study it was found out that people often classified the soul, and the conscience as one common phenomenon. Thus, they did not consider abortion a sin, and the latter was justified in the case of classification of the soul existence and conscience as one common phenomenon. It is logical that the unborn child can't have a sense of conscience. In addition, the abortion was also justified when the spirit and the soul were considered as similar phenomena, as the child starts to breathe after the delivery. Also, the abortion was justified when the soul was considered as an intangible origin of life. Hence, the artificial interruption of pregnancy after the 3-4month (when the fetus movements were noticeable) were not justified and considered as a sin. However, all of the above listed cases a contraded to the ideologies of the Christian church, i.e. the "life begins" at the moment of conception.

<sup>42</sup> Մանգասարյան Դավիթ դավիթ, Հղիության արհեստական ընդհատում, Տարեգիրք Գ, Էջմիածին, 2006, էջ 93: